«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմանխնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում»

Առարկան՝ «Կենսաբանություն»

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի «Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց»

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն. 2
ԳԼՈՒԽ 1. Ուսումնասիրել էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես անձի ձեվավորման և զարգացման անհրաժեշտ բաղադրամաս…….……..4
ԳԼՈՒԽ 2. Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները……...……...11
ԳԼՈՒԽ 3. Հետազոտական աշխատանք…….17
3.1 Հետազոտական աշխատանքի կազմակերպումը և ստացված արդյունքների վերլուծությունն ու ամփոփումը……17
Եզրակացություն…….....20
Գրականության ցանկ……22

***Թեմա*: Բնապահպանություն որպես մարդկության գլխավոր հիմանխնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում**:

***Թեմայի հիմանխնդիրը*:** Շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքները վերանցնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ որոնցում գերակա տեղ է զբաղեցնում անձի էկոլոգիական դաստիարակության և կրթության խնդիրը: Էկոլոգիական դաստիարակության կարևոր գործոն է համարվում անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում: Դպրոցում ավելի արդյունավետ է սովորողների բնապահպանական վարքագծի ձևավորումը: Այդ տարիքում աշակերտներն առավել հետաքրքրված են որոշ էկոլոգիական իրավիճակներով, մասամբ կարող են գիտակցել այն վտագները, որոնք առաջանում են բնության նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի արդյունքում:

Թեմայի արդիականությունը: «Բնապահպանություն որպես մարդկության գլխավոր հիմանխնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում» թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ 21-րդ դարում մարդկությունը կանգնած է բավականին լուրջ էկոլոգիական աղետի առջև: Մարդկանց բացասական և անպատասխանատու ազդեցության և գործունեության հետևանքով կարող է խախտվել «մարդ–բնություն-հասարակություն» փոխգործակցության հավասարակշռությունը, իսկ այն վերականգնելու համար անհրաժեշտ կլինեն մարդկային մեծ ջանքերի գործադրում: Շրջակա միջավայրի վրա մարդու գործունեության բացասական հետևանքները վերանցնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝ որոնցում գերակա տեղ է զբաղեցնում անձի էկոլոգիական դաստիարակության և կրթության խնդիրը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել բնապահպանական խնդիրները և նրանց ուսուցումը դպրոցում, այս նպատակից ելնելով աշխատանքում հետազոտվել են հետևյալ խնդիրները՝

- ***Վերլուծել բնապահպանություն որպես մարդկության գլխավոր հիմանխնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում***
- ***Վերլուծել Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները***
- ***Հետազոտական աշխատանքի կազմակերպումը և ստացված արդյունքների վերլուծություն ու ամփոփում:***

Խաչվող հասկացություններ. Էկոլոգիա, կրթություն, բնապահպանական դաստիարակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ է սխալներն ու թյուրիմացությունները գալիս են մարդուց:
Յ.Վ.Գյոթե

Էկոլոգիական կրթություն, գիտելիքների, ունակությունների ու հմտությունների ստացման և յուրացման ընթացքն ու արդյունքը, որը նպատակաուղղված ձևով կազմակերպվում և հետևողականորեն իրականացվում է կրթական, գիտակրթական ու դաստիարակչական հաստատություններում: Էկոլոգիական կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են քաղաքացու էկոլոգիական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ստանալու պետական երաշխիքի ապահովումը, էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, էկոլոգիական կրթության ուղղվածությունը շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում:դրա շարունակականությունը և համալիր բնույթը, էկոլոգիական կրթության հարցերի ընդգրկումը էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում:

Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես: Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը հատկացնում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, ըստ նրա, բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացում:

Աշակերտների էկոլոգիական և բնագիտական դաստիարակությունը մանկավարժության մի ուղղություն է, որը կազմավորվել է վերջին տարիների ընթացքում: Ի տարբերություն այդ ավանդական մեթոդների, որտեղ աշակերտին սովորեցնում էին անվանել և տարբերել բնության օբյեկտները՝ որտեղ երեխաները սովորում էին տեսնել բնության որոշ առանձնահատկություններ՝ արտաքին տեսքը, կենդանիների վարքագիծը, բույսերի աճի պայմանները, դրանց խնամքը և այլն, նոր մեթոդները առաջացան առաջին հերթին մարդու և բնության փոխազդեցության և էկոլոգիական խնդիրների բարձրացման շնորհիվ: Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է:

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը:

Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակությունը ունի կարևոր դեր, քանի որ այդ տարիքում ներդրվում են անձի էկոլոգիական մշակույթի հիմքերը: Էկոլոգիական դաստիարակության արդյունքը դա անձի էկոլոգիական մշակույթի և բնության հետ գրագետ փոխհարաբերությունների համադրություն է: Էկոլոգիական մշակույթի կարևոր մաս է կազմում երեխաների կողմից կենդանի և անկենդան աշխարհի միասնության և փոխկապվածության գաղափարի ընկալումը:

ԳԼՈՒԽ 1. *ՎԵՐԼՈՒԾԵԼ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄԱՆԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ*

Էկոլոգիա բառը («Ökologie») առաջին անգամ կիրառել է Էռնստ Հեկկելը՝ «Օրգանիզմների ընդհանուր մորֆոլոգիա» գրքում (գերմաներեն՝ «Generelle Morphologie der Organismen») 1866 թվականին: Էկոլոգիական միտքը ներկայիս փիլիսոփայության, հատկապես՝ էթիկայի և քաղաքականության արգասիքն է: Էկոլոգիա հունարենից թարգմանաբար նշանակում է <<oicos>>տուն, կացարան և <<logos>>-գիտություն: Էռնեստ Հեկկելի կողմից ներկայացվել է որպես գիտություն սեփական տան,կացարանի մասին:Մարդկության <<տունը>> Երկիր մոլորակն է,որն այսօր խնամքի ու պահպանման կարիք ունի:

Վերբիցկին էկոլոգիական կրթություն ասելով հասկանում է մարդու կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացում դաստիարակություն և ինքնակրթության միջոցով, ինչպես նաև կենցաղային և աշխատանքային գործունեության շրջանակներում: Իսկ անընդմեջ էկոլոգիական կրթության նպատակը նա համարում է էկոլոգիական կուլտուրայի հարստացումը ամբողջ կյանքի ընթացքում [7]:

Հին հույն փիլիսոփաները՝ Հիպոկրատը և Արիստոտելը իրենց բնագիտական հետազոտություններում նկարագրել են էկոլոգիայի հիմնական գաղափարները: Ժամանակակից էկոլոգիան ձևավորվել և իր զարգացումն է ապրել 19-րդ դարի վերջին: Հարմարողականության և բնական ընտրության էվոլյուցիոն պատկերացումները դարձել են էկոլոգիական տեսության հիմնաքարերը:

Մարդու գոյությունը պայմանավորված է մարդու և բնության ներդաշնակ հարաբերակցությամբ: Առողջ և մաքուր շրջակա աշխարհ ունենալու խնդրով շահագրգռված է ողջ մարդկությունը: Նախադպրոցական հաստատություններում էկոլոգիական դաստիարակությունն իրականացվում է պարապմունքների, էքսկուրսիաների, զբոսանքների, բնության անկյունում և մանկապարտեզի տեղամասում կազմակերպված աշխատանքների, ինչպես նաև սենյակային բույսերի խնամքի և բազմացման, սերմերի աճեցման, բնագիտության կենտրոնում անցկացվող փորձերի, բնությա ն օրացույցի դիտարկման և այլ աշխատանքների միջոցով:

«Էկոլոգիական գիտակցություն» տերմինն ավանդաբար նշանակում է «մարդ-բնություն» համակարգում, բնության ներսում փոխադարձ կապերի բարելավում, բնության նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի բարելավում, ինչպես նաև տեխնոլոգիայի և ռազմավարության գիտակցական մոտեցում:

Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման և զարգացման անհրաժեշտ բաղադրամաս՝ առաջնորդվել նման կոնցեպցիայով կնշանակի. առաջին՝ աղճատել դաստիարակության բովանդակությունը, երկրորդ՝ կտրատել դաստիարակության ընդհանուր համակարգի օրինաչափ կապերը, երրորդ՝ արհեստականորեն խոչընդոտել դաստիարակության մյուս բաղադրամասերի ուղղությամբ կրթվելու, դաստիարակվելու, զարգանալու՝ դպրոցականներին ընձեռնված հնարավորությունները, չորրորդ՝ դաստիարակության նկատմամբ չունենալ համալիր մոտեցում կամ ուղղակի հրաժարվել այդ գաղափարից:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Երեխաների էկոլոգիական կրթությունն իրականացվում է երեք փոխկապակցված գործընթացների՝ կրթության, դաստիարակության և զարգացման միջոցով, այն ուղղված է անձի բնապահպանական մշակույթի զարգացմանը, մարդկային փոխազդեցության և հոգևոր փորձի հարստացմանը՝ ապահովելով դրա գոյատևումը և զարգացումը:

«Էկոլոգիական գիտակցության» ձևավորումը հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիրակչական աշխատանքում, ըստ կրթական համակարգի տարբեր օղակների: Էկոլոգիական գիտելիքների ձևավորման չափանիշներն են կենդանական, բուսական և անկենդան աշխարհի մասին տեղեկությունները: Էկոլոգիական կրթության ծրագրի խնդիրը երեխաների շրջակա միջավայրի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի ձևավորումն է, բնության հետ շփման, բույսերի ու կենդանիների նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դրսևորումը: Դեռևս վաղ տարիքից երեխաների մեջ անհրաժեշտ է ձևավորելու դաստիարակել

սեր և հոգատար վերաբերմունք բույսերի, կենդանիների նկատմամբ,վարքի ճիշտ դրսևորում բնության գրկում: Հարկավոր է ձևավորել որոշակի գիտելիքներ՝ բույսերի,ընտանի և վայրի կենդանիների , կյանքի պայմանների մասին: Երեխան ինքն էլ լինելով բնության մի մասնիկ պետք է կարողանա իրականացնել բնապահպանական առանձին խնդիրներ:

Աշակերտը պետք է իմանա կարևորագույն հարցերի պատասխանները (նկար 1):



Նկար 1. Աշակերտի կողմից կարևորագույն հարցերի պատասխանները

Բնությունը երեխայի վրա ներազդելու հզոր միջոց է և դաստիարակելու լավագույն մեթոդ, մարդկության կարևորագույն հատկանիշը գիտելիքներ ձեռք բերելու ձգտումն է, իսկ ուսուցման պարագայում իմացության խթանը ճանաչողական հետաքրքրությունների բավարարման և մտահորիզոնի ընդլայման պահանջն է:

Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից: Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման **[7]**:

Շրջակա միջավայրի վիճակի այդպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը ըստ էության, կրում է աշխարհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ[3]:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում: Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության կուլտուրայի պատվաստման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր-բարոյական հասունացումը՝ նպաստելով նրա՝ բնության հետ ունեցած հարաբերությունների ներդաշնակությունը և որոշում հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարները [3]: Էկոլոգիական դաստիարակությունը չի կարողկիրառվել սոցիալ-մշակութային տեսանկյունից դուրս, քանի որ մարդու փոխգործունեությունը բնության և սոցիալական միջավայրի հետ միշտարտացոլում է մշակույթի այն տեսակը, որի կրողը նա է: Ահա թե ինչու առանց բնօգտագործման փոփոխության չի կարելի սպասել կենսոլորտում դրական փոփոխությունների:

Մշակույթը դա մարդու կենցաղի այն բնագավառն է, որտեղ պետք է փնտրել 8 էկոլոգիական հիմնախնդիրների պատասխանները, քանի որ նրա հիմնավորման մեջ է ընկած բնության իմաստավորման արժեքները: Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը էկոլոգիական իմաստով հասունացնում է անձի շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում՝ իմացական հուզազգացմունքային և նորմատիվային մակարդակներում: Արդյունքում՝ դաստիարակության օբյեկտը՝ անձը, բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝ հաղթահարելով այն բարդույթը, որ կողմնորոշված է մարդու՝ բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ:

Գիտականների մեկ ուրիշ խումբ էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դիտում է որպես անձի էկոլոգիական գիտակցության և մտածողության, էկոլոգիական կուլտուրայի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև

բնօգտագործման գործնական փորձի ձևավորում և տեղյակություն, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի էկոլոգիական անվտանգությանը: «Էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական մտածողություն», «էկոլոգիական կուլտուրա» հասկացությունները նոր են և դեռևս ձևավորման ընթացքի մեջ են, որոնք խնդրառում են նոր բացատրություններ: Էկոլոգիական կուլտուրան, որպես դաստիարակության հետևանք, չպետք է ընկալել որպես զուտ արտաքին ներգործություն: Էկոլոգիական կուլտուրայի տիրապետող մարդը տարբերվում է բնության հետ ներդաշնակության հասնելու ոչ միայն իր արտաքին աշխարհով, այլև իր ներքին աշխարհով: Այսօր, երբ բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով կորչում են բարոյական շատ արժեքներ, և հասարակությունը կարիք է զգում իսկական արժեքների, պետք է հենվել բնահարմարության, ճշմարիտ արժեքների գերակայության վրա, որով կարելի է որոշել իսկական էկոլոգիական կուլտուրա ունեցող անձին: Միայն կուլտուրայի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին: Էկոլոգիական կուլտուրա ունեցող մարդը առաջին հերթին հասնում է ներդաշնակության ինչպես իր ներաշխարհի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ: Ավագ դպրոցական տարիքում այդ ունակությունը ձևավորվում է հիմնական հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի և էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին: Մարդուն շրջապատող աշխարհը բազմաձև և բազմադեմ է, դա ոչ միայն բնական և սոցիալական աշխարհն է, այլ արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների, բառերի աշխարհն է: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ ավագ դպրոցականը այնպիսի հարաբերություններ պետք է ստեղծի, որոնք նրան հնարավորություն կտան՝ ներդաշնակ ապրելու դրանց հետ:

ԳԼՈՒԽ 2. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվաղքի մեջ: Անձի համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայածքի ձևավորումն ունի իր արանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը:

«Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը: 2009թ ՀՀ կառավարության թիվ 47 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը [6]: Մեկ տարի անց հաստատվել է հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիր, որի շրջանակներում կրթության ոլորտի լիազոր մարմնի՝ կրթության և գիտության նախարարության հետ իրականացվել են մի շարք միջոցառումներ: ՀՀ կառավարության 2017թ գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մեջ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ ընդգրկվել է էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության մշակման հարցը: ՀՀ օրենքը 2009թ նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ–ում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը» [6]: 2009թ հունիսի 10-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը հանրակրթության սկզբունքների թվում սահմանում է նաև աշակերտների մոտ բնապահպանական աշխարհայացքի ձևավորում [6]: Բնապահպանական կրթության վերաբերյալ պահանջները տարածվում են նաև ֆիզիկական, մտավոր, և հոգեկան զարգացվածության թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվող հանրակրթության վրա: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշակերտների շրջանում էկոլոգիական կրթության կազմակերպման և այդ բնագավառում նրանց գիտելիքների և իրազեկվածությանբարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացվում է մի

շարքծրագրեր, որոնցից կարևոր է համարվում ՝ հանրակրթական տարրական դպրոցում էկոլոգիական կրթության և դաստիարակության կազմակերպումը, որը իրականացվում է մեծ մասամբ «Ես և շրջակա» աշխարհը և << Բնագիտություն>> դասընթացի միջոցով [3,5]:

Ժամանակը պահանջում է իրականացնել համալիր դաստիարակություն: Դա նշանակում է իրականացնել դաստիարակություն ընդհանուր համակարգի բոլոր բաղադրամասերի՝ մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակության առումով [1, 2]:

Էկոլոգիական դաստիարակության կարևոր գործոն է համարվում անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է բարոյականային որակների, համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է, և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվաղքի մեջ: Անձի համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայածքի ձևավորումն ունի իր արանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը (նկար 2):



Նկար 2. Բնապահպանական խնդիրների կանխատեսման և լուծման ուղիներ

Դպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնական նպատակը նրանց մոտ էկոլոգիական գիտակցություն ձևավորելն է, սովորողների անհատական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ անձնական պատասխանատվության զգացումի դաստիարակումը: Էկոլոգիական դաստիարակության ռազմավարական նպատակը էկոլոգիապես կրթված ու դաստիարակված անձի ձևավորումն է, որն օժտված է էկոլոգիական գիտակցությամբ, էկոլոգիական մտածողությամբ և աշխարհայացքով, էկոլոգիական մշակույթով և վարքով, էկոլոգիական արժեքային կողմնորոշումների համակարգով և պատասխանատվության զգացումով: Էկոլոգիական կրթության նպատակն է «շրջակա միջավայրի նկատմամբ ձևավորել պատասխանատու վերաբերմունք, որը կառուցված է բնապահպանական իրազկության հիման վրա» [8]:

Ժամանակակից էկոլոգիան համարվում է կիրառական համալիր գիտություն: Էկոլոգիական դաստիարկությունը ենթադրում է էկոլոգիական գիտելիքների կուռ համակարգի յուրացում, էկոլոգիական արժեքների փոխանցում սովորողների էկոկոնկրետ գիտակցության և վարքագծի ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է էկոլոգիական հասկացությունների, գիտելքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Էկոլոգիական կրթությունը որպես սովորողի էկոլոգիական դաստիարակության հիմնական միջոց, նպաստում է

տարրական դպրոցում սովորող աշակերտի բնաճանաչողական ընդունակությունների զարգացմանը, բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էկոլոգիական ուղղվածության առաջադրանքներ, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր: Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակային կիրառումը: Էկոլոգիական դաստիարակության առավել արդյունավետ մեթոդ է բանավեճը: Բանավեճի թեմայի ընտրության ժամանակ հաշվի է առնվում կրտսեր դպրոցականի էկոլոգիական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճի հիմնական նպատակը նպաստել սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների, և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Էկոլոգիական բովանդակությամբ խաղի պլանավորումը ենթադրում է՝ որոշակի իրավիճակում բնապահպանական և բնօգտագործման փորձի յուրացումը: Խաղը ընդգրկում է մի քանի փուլեր՝ նպատակադրում, պլանավորում, իրականացում արդյունքների վերլուծություն: Խաղը ուղղված է էկոլոգիական տարբեր խնդիրների քննարկմանը՝ փոխներգործության ու երկխոսության պայմաններում: Էկոլոգիական խաղը նպաստում է էկոլոգիական գիտելիքների ամրապնդմանը և ձևավորմանը, էկոլոգիական, ազգային, մշակութային արժեքների ինտեգրմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության ընթացքում ուսուցիչը պետք է հասկանա տվյալ իրադրության ժամանակ մեթոդների արդյունավետ համադրման անհրաժեշտությունը: Էկոլոգիական բովանդակությամբ նյութերի յուրացման համար նպատակահարմար է կիրառել ուսուցման տարբեր մեթոդների համատեղում, որի նպատակը խմբայինքննարկումների, դերային խաղերի, միջոցով հասնել հաղորդվող նյութի հիմքային ընկալմանը, գիտելիքների ձևավորմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը կիրառելով աշակերտակենտրոն ուսուցում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար էական կարևորություն ունեն մեթոդաբանական հետևյալ պահանջները.

- Ուսումնական գործունեութան իրականացման մեջ առանձնացնել գլխավոր օղակը:
- Ընդհանրացնել այդ գործընթացի խնդիրներն ու բովանդակությունը, սպասվող արդյունքները:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության առաջին պայմանը ուսուցչի մեթոդական պատրաստվածությունն է:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման ընթացքում «բնագիտություն » ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում կարելի է նախաձեռնել և իրականացնել հետևյալ նախագծերը (նկար 3)



Նկար 3. Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման ընթացքում «Կենսաբանության» ուսումնական առարկայի նախագծերի իրականացում

Ուսուցման գործընթացում սովորողների կողմից բնության մասին տեսական գիտելիքները յուրացնելը բավական չեն, այն պետք է համակցել գործնականի հետ՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերելով բնության պահպանմանը և բարեկարգմանը:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է (բազմատեսանկյուն), և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, տեղային ավանդույթներն ու սովորույթները՝ էկոլոգիական գիտակցության ամբողջական ուսումնասիրումը և բնութագրումը հնարավորություն կտան ավելի նպատակային կազմակերպել էկոլոգիական կրթությունը [2]:

Հայաստանի Հանրապետությունում ծավալված տնտեսական բարեփոխումները և միջազգային բնապահպանական համագործակցության շրջանակների ընդլայնումը նպաստեցին

նոր էկոլոգիական քաղաքականության ձևավորմանը, որը ներկա և ապագա սերունդների համար կսեղծի կայուն երաշխիքներ էկոլոգիապես անվտանգ շրջակա միջավայրում առողջ և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Նման նպատակի իրագործումը բարդ և կարևոր խնդիր է և անհնար է առանց բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման զարգացմանը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության ակտիվ ներգրավումը մի շարք միջազգային բնապահպանական, կրթական և տեղեկատվական կոնվենցիաներին, ինչպես նաև ՄԱԿ-ի ԵՏՀ-ի "ԿրթությունԿհանուն կայուն զարգացման" ռազմավարության գործընթացներին որոշակի պարտավորություններ է դրել մեր երկրի վրա՝ պահանջելով ուշադրության կենտրոնում պահել բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման զարգացման գործընթացը [6]: Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը և հրատապությունը պայմանավորված է նաև երկրում ստեղծված անբարենպաստ էկոլոգիական իրավիճակով, որի պայմաններում դիտվում է զգալի տարբերություն տնտեսական աճի և շրջակա միջավայրի որակի, հասարակական էկոլոգիական գիտակցության ու բնապահպանական վարվելաձևի միջև: Սույն հայեցակարգի շրջանակներում բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգը դիտվում է որպես անընդհատ գործընթաց, որն ընդգրկում է հասարակության լայն խավերը:

Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի տակ պետք է հասկանալ կրթական տարբեր մակարդակներում իրականացվող գործողությունների ամբողջություն, որը հասարակության էկոլոգիական գիտակցության, գիտելիքների և պատասխանատվության բարձրացման միջոցով բնակչության համար ստեղծում է էկոլոգիապես անվտանգ և առողջ շրջակա միջավայր: Նշված ազգային համակարգի հաջողության երաշխիքն է՝ բնապահպանական կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղված բոլոր գերատեսչությունների ու հասարակության լայն շրջանակների միասնական համակարգված աշխատանքը:

ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
3.1 ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Պետք է գիտակցել, որ մարդն իր շարունակական գոյության համար կախված է այն միջավայրի բարվոք վիճակից, որտեղ ինքը ծագել Բնական գիտություններ ու զարգացել է, որ այսօր այդ միջավայրի կենսաքիմիական փոփոխությունները կարող են մահացու լինել նրա համար [4]**:**

Որպեսզի լուծենք մեր առջև դրված խնդիրները ու նպատակները՝ նախ և առաջ հարցաթեթիկի միջոցով պարզել ենք, թե դպրոցականները բնապահպանական ի՞նչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների են տիրապետում, այնուհետև հարցաթերթիկի միջոցով պարզել ենք, թե տարբեր դպրոցների տարրական և միջին դասարաններում դասավանդող ուսուցիչները էկոլոգիական դաստիարակության գործընթացը կազմակերպելու ընթացքում ինչ խնդիրների են բախվում:

Աշխատանքի նպատակն է եղել բացահայտել կրթական համակարգի տարբեր օղակներում սովորողների մոտ ձևավորված էկոլոգիական գիտելիքների մակարդակը և անցկացնել վիճակագրական հարցումներ համապատասխան հարցերով:

Առաջարկվել են հետևյալ հարցերը.

1. **Ի՞նչ է շրջակա միջավայրը և էկոլոգիան:**



Նկար 4. Ի՞նչ է շրջակա միջավայրը և էկոլոգիան հարցման արդյունքները

Նկար 4-ում ներկայացված է ի՞նչ է շրջակա միջավայրը և էկոլոգիան հարցմանը մասնակցած 100 աշակերտների ճնշող մեծամասնությունը՝ 98%-ը պատասխանել է ճիշտ: Ներկայացված գծապատկերից ակնհայտէ, որ դպրոցականները պատկերացում ունեն շրջակա միջավայրի և էկոլոգիայի մասին:

2. Սիրո՞ւմ եք բնությունը:



Նկար 5. Սիրո՞ւմ եք բնությունը հարցման արդյունքները

Սիրո՞ւմ եք բնությունը հարցին հարցմանը մասնակցած 50 աշակերտների ճնշող մեծամասնությունը պատասխանել է «Այո», ինչը փաստում է, որ դպրոցականների մոտ իրենց շրջապատող միջավայրի նկատմամբ սերը և հոգատարությունը մեծ է: Նրանք արտահայտված դրական վերաբերմունք ունեն շրջակա միջավայրի նկատմամբ, ինչը գոհացնող հանգամանք է:

3. Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամ:



Նկար 6. էկոլոգիական ճգնաժամ հարցման արդյունքները

Նկար 6-ում ներկայացված է ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամը: Հարցին տրված պատասխանները փաստում են. կրտսեր դպրոցականները, գիտեն բնությունը մարդուն շրջապատող միջավայրի և էկոլոգիական վնասների և ճգնաժամի մասին: էկոլոգիական ճգնաժամ հարցի (2-րդ հարցը) պատասխանները կրում էին հիմնականում մասնակի բնույթ: Այսինքն սովորողները էկոլոգիական ճգնաժամ ասելով հասկանում են միայն օդի աղտոտումը, կամ կենդանական ու բուսական աշխարհի վերացում:

4. **Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:**



Նկար 7. Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ հարցման արդյունքները

Նկար 6-ում բերված է բնությունը և մարդը կարո՞ղ են լինել և բարեկամներ, և թշնամիներ հետազոտության արդյունքները: Հարցումը անցկացվել է 5, 6 և 7-րդ դասարաններում: Պարզվեց, որ կային այսպիսի պատասխաններ այն մասին, որ բնությունը հիմնականում մարդկության հետ ունի թշնամական հարաբերություններ: Հատկապես զոհացնող է այն հանգամանքը, որ աշակերտների գերակշռող մասը դրական պատասխան է տվել, սակայն մտահոգիչ է, որ կան երեխաներ ովքեր այս մասին մտածում են, բայց իրենց վարքագծում ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքին:

Պատասխանների մեջ չկար լիարժեք գիտական մակարդակով մեկնաբանումներ և թե իրենք ի՞նչ անելիքներ ունեն այդ հարցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է դպրոցականի գիտական աշխարհայացքի կառուցվաղքի մեջ: Աշակերտների համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայածքի ձևավորումն ունի իր արանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը;

Աշխատանքի նպատակն է եղել բացահայտել կրթական համակարգի տարբեր օղակներում սովորողների մոտ ձևավորված էկոլոգիական գիտելիքների մակարդակը և անցկացնել վիճակագրական հարցումներ:

Հարկ է նշել, որ բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ազգային համակարգի տակ պետք է հասկանալ կրթական տարբեր մակարդակներում իրականացվող գործողությունների ամբողջություն, որը հասարակության էկոլոգիական գիտակցության, գիտելիքների և պատասխանատվության բարձրացման միջոցով բնակչության համար ստեղծում է էկոլոգիապես անվտանգ և առողջ շրջակա միջավայր:

Որպեսզի լուծենք դպրոցականների առջև դրված էկոլոգիական խնդիրները ու նպատակները՝ նախ և առաջ հետազոտական հարցումների միջոցով անհրաժեշտ է պարզվել է, դպրոցականները բնապահպանական ի՞նչ գիտելիքների, կարողությունների և հմտությունների են տիրապետում, և ի՞նչ խնդիրների հետ են բախվում:

Հետազոտական աշխատանքը տարվել են 5-րդ դասրանից մինչև 7-րդ դասրան աշակերտների մոտ: Ընդհանուր հետազոտական հարցմումներին մասնակցել են 50-100 աշակերտ:

Առաջարկվել են հետևյալ հարցերը.

- **Ի՞նչ է շրջակա միջավայրը և էկոլոգիան**
- **Սիրո՞ւմ եք բնությունը:**
- **Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամ:**
- **Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:**

Կատարված գիտական հետազոտության արդյունքում եզրակացվել է որ.

Ակնհայտ է, որ դպրոցում ավելի արդյունավետ է միջին դասարանից սկսած

բնապահպանական վարքագծի ձևավորումը: Այդ տարիքում աշակերտներն առավել հետաքրքրված են որոշ էկոլոգիական իրավիճակներով, Մասնավորապես նկար 3, 4-ում ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ աշակերտները մասամբ կարող են գիտակցել այն վտագները, որոնք առաջանում են բնության նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի արդյունքում::

Այսպիսով, բնապահպանական միջոցառումները մեծ ներուժ ունեն դպրոցականների ճանաչողության ձևավորման գործում (նկար 5, 6): Նկար 6-ում ներկայացված է ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամը: Հարցին տրված պատասխանները փաստում են. կրտսեր դպրոցականները, գիտեն բնությունը մարդուն շրջապատող միջավայրի և էկոլոգիական վնասների և ճգնաժամի մասին: Եվս մեկ անգամ հաստատվում է, որ բնության պահպանումը է բնության նկատմամբ արժեքային վերաբերմունքի զարգացմանը: Այդ պատճառով պետք է ավելի հետաքրքիր և դարձնել ուսումնական գործընթացը և շարունակ առաջադրել նոր մեթոդական մոտեցումներ:

Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած է էկոլոգիական հասկացությունների, գիտելքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Էկոլոգիական կրթությունը որպես սովորողի էկոլոգիական դաստիարակության հիմնական միջոց, նպաստում է տարրական դպրոցում սովորող աշակերտի բնաճանաչողական ընդունակությունների զարգացմանը, բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը: Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, էկոլոգիական ուղղվածության առաջադրանքներ, էկոլոգիական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնահետազոտական նախագծեր: Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակային կիրառումը:

Այսպիսով, հետազոտություններ կարելի է եզրակացնել, որ աշակերտները սիրով և հոգատարությամբ են լցված բնության նկատմաբ, գիտեն իրենց դերը բնության պահպանության հարցում:

ԳՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աջամօղլյան Ա. Գ., Էկոլոգիական հանրակրթության հիմնախնդիրները, Երևան ԵՊՀ, հրատարակչություն 2004 թ., 112 էջ:

2. Ասատրյան Լ.Թ, Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքներ, Երևան, Արտագերս 2009թ., 335 էջ:

3. Ասատրյան Լ.Թ Կարապետյան Ն.Զ., Ես և շրջակա աշխարհը ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Երևան Արտագերս 2016թ, 224 էջ:

4. Ասատրյան Մ.Ա Էկոլոգիակ կրթության դերը ընդհանուր ևմասնագիտական կրթության համակարգում, Մանկարավրժական մտքի հանդես 2002թ թիվ 1-7էջ:

5. Ավանեսյան Լ.Գ, էկոլոգիական դաստիարակության նպատակները, խնդիրները ու սկզբունքները, Մանկավարժական մտքի հանդես թիվ 8 Երևան, 2001թ, էջ 60-64

6. ՀՀ.էկոլոգիական կրթության մասին օրենքը, Երևան 2002թ., 25 էջ:

7. Венгер Л.А., Марцинковская Т.Д., Венгер А.Л. Готов ли ваш ребенок к школе. – М.: Знание, 1994. – 192 с.

8. Սուխոմլինսկի Վ.Ա , Քաղաքացու ծնունդը, Երևան, հրատ., 1978թ., 348 էջ: